Աղցի ստորերկրեայ գերեզմանատանը՝ պատկի մէջ առնուած հաւասարակող խաչի հորիզոնական թեւերին (պատկ. 24), երկուսն էլ Քրիստոսի անուան փակագիր. Մատաթայի



Պատկեր 23

Էջմիածնի հիւսիսային պատին՝ Քրիստոսի անուան փակագիր (μονόγραμμος) Դ. դար.

Պատկ. 24 Լուս. Աշխարհագ. Բալանթարի

Աղցի ստորերկրեայ գերեզմանատանը (Դ. դար).

վերոյիշեալ կոթողի միւս երեսի վերայ, խաչի գլխին (պատկ. 25)(1). Նաև Աբարանի չրջանի Ամնայ գիւղի աւերակ, բազիլիկ եկեղեցու դրան ճակատաքարի քանդակի մէջ (պատկ. 26), զարդերով և ձեւակերպութեամբ նման Բասաղի կամ Բաշ–Աբարանի աւագ ժամանակակից եւ իւր տեսակի մէջ հայ ճարտարապետութեան ամենաթանգագին մնացորդներից մէկի ճակատաքարին։ Ամնայ գիւղի եկեղեցին համարում ենք ոչ ուշ քան Զ. դարը, իսկ Բասաղինը, քան Ե. դարը, որ առիթ կ'ունենանք պարզելու յատուկ աշխատութեան մէջ, ինչպէս և գերեզմանական կոթողների պատկերագրութիւնը մինչ Է. դար։

Զոյգ աղաւնիները նկատում ենք և աւելի յետոյ՝ խաչքարերի վերայ (պատկ. 4, 27)։ Այս վերջին իւրատեսակ խաչքարը գտնւում է Վեղիի ակունքներում՝ Մանկուսի հին գերեզմանատանը (մեծ. 1,17×0,85), ուր կայ և մի այլ խաչքար Քրիստոսի մոնոգրամով (վեցթեւանի խաչ), մի ուրիշը Դաւնիում, որ Է. դարից աւելի վաղ չրջանին են պատկանում(1)։

(1) Աղցինը լուսանկարուած է Աշխարհագ. Բալանթարի ձեռքով գիպսից պատրաստած կաղապարից, իսկ Մատաթայինը Թորամանեանի ձեռքով. երկուսին էլ խորին շնորհակալութիւն։

(1) Իւր ձեւով, խորհրդանիշներով եւ հին թուականով մի կարեւոր խաչքարի մասին տեղեկութիւն է տուել Խաչիկ վարդապետը. Վայոց ձորի եւ Զանգեզուրի սահմաններում եղած Ղուշչիրիլաց գիւղի մէջ։ Խաչի բարձրութիւնն է մօտ վեց մետր, այրի չափով, իւր ձեւով նման մահմեդական գերեզմանաքարերին. այսինքն վերեւի մասը բոլորակ ու լայն, որ հետզհետէ նեղանում է դէպի պատուանդանը (այդ ձեւի մի խաչքար տես մեր Խաղբակեանը Ա. 135). արեւմտեան երեսին քանդակուած է մի պարզ խաչ հորիզոնական թեւերից բարձր դէմառ դէմ երկու աղաւնի, ապա թեւերի ծայրերին արագիլ, իսկ հիմքի մօտ ուղղաձայեաց ձողի արմատում երկու բադ, որոնց ոտներից ցած երկու օձ (?) օղակ են կազմում իրար փաթաթուած։ Հորիզոնական թեւերի տակ կայ հետեւեալ արձանագրութիւնը. «Մուրբ Գէորգ | ես արարիչ (?) Ուսէ|փ ծառա բի»։ Իսկ խաչքարի յետեւը. դէպի արեւելք. «Քս ասիրուն (?) բարեհոգութիւն (?) տր տր Յեւանեսի Սունեաց եպիսկոպոսի. ի թագաւորութեան Վասակա տր Բարգենի որդի Սիւնեաց իշխանի թվականութեան ՅԼԵ։ էր.